

Թ. Ա. ՂԱՐԱԳՅՈՒՆՅԱՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԵՐԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ
ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՐԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

V դարի մատենագրությամբ ավանդված հին հայերենը (գրա-
բարը) թեև խիստ կերպով ենթարկվել է տեղական լեզուների ազ-
դեցությանը, բայց և այնպես լիովին պահպանել է իր հնդեվրո-
պական բնույթը:

Հին հայերենի բայերի խոնարհումն ընդհանուր առմամբ զար-
գացել է այն ուղղությամբ, որ հնդեվրոպական խոնարհման բարդ
համակարգը վերածվել է շատ ավելի պարզ և կայուն համակարգի:
Նախ և առաջ հնդեվրոպական հիմնալեզվի բազմաթիվ և մեկը մյու-
սից անկախ բայական հիմքերից հայերենում պահպանվել են
միայն երկուսը՝ ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը: Պարզվել
է նույնպես դիմային վերջավորությունների համակարգը: Դիմային
վերջավորությունների մեջ կատարված մեծ փոփոխությունները
հիմնականում տեղի են ունեցել նրանց կրճատման հետևանքով:
Ծնթադրվում է, որ նախապատմական շրջանում մի ուժգնական
շեշտ դրվել է վերջընթեր վանկի վրա, որի պատճառով հնդեվրո-
պական բազմաձևի բառերը հայերենում մեկ վանկով կրճատվել
են: Հայերենում հնդեվրոպական հիմնալեզվի ներգործական և հա-
սարակ սեռերի վերջավորություններից պահպանվել են միայն
առաջինները, իսկ հասարակ սեռի վերջավորությունները ջնջվել են՝
տեղի տալով կրավորաձև խոնարհման վերջավորություններին:
Երկակի թվի գաղափարի վերացման հետ մեկտեղ հայերենի բա-
յերի մեջ ջնջվել են նաև երկակի թվի վերջավորությունները: Հայե-
րենում ձուլվել են նաև հնդեվրոպական հիմնալեզվի բնավոր և ան-

քուն տիպի բայերի վերջավորութիւնները: Ինչպես հնդեվրոպական շատ լեզուներում, այնպես էլ հին հայերենում, թեև վերացել է առաջնային և երկրորդական վերջավորութիւնների շարքերի հակադրութիւնը (որով արտահայտւում էր հնդեվրոպական հիմք-լեզվի ներկա և անցյալ ժամանակների գաղափարը), բայց և այնպես այդ վերջավորութիւններից շատերը որոշ ձևափոխութիւնների ենթարկւելով՝ պահպանւել են:

Հնդեվրոպական հիմնալեզվի առաջնային վերջավորութիւնները առանձնապես լավ են դրսևորւում հայերենի ներկա ժամանակում: Ներկայում բոլոր շորս խոնարհումներն էլ ունեն միևնույն վերջավորութիւնները: Դրանք են.

1-ին դ.	-մ	-մք
2-րդ դ.	-ս	-լք
3-րդ դ.	-յ	-ն

Այս վերջավորութիւնները միանում են ե, ի, ա, ու բնի ձայնավորներին (թեմատիկ ձայնավորներ), որոնցով կազմւում է բայի բունը:

Ներկայի խոնարհումն ունի հետևյալ պատկերը.

Ե խոնարհում		Ի խոնարհում	
բեր-ե-մ	բեր-ե-մք	խօս-ի-մ	խօս-ի-մք
բեր-ե-ս	բեր-է-ք	խօս-ի-ս	խօս-ի-ք
բեր-է	բեր-ե-ն	խօս-ի	խօս-ի-ն

Ա խոնարհում		Ու խոնարհում	
աղ-ա-մ	աղ-ա-մք	լն-ու-մ	լն-ու-մք
աղ-ա-ս	աղ-ա-լք	լն-ու-ս	լն-ու-ք
աղ-ա-յ	աղ-ա-ն	լն-ու	լն-ու-ն ¹

Չորս խոնարհումների դիմային վերջավորութիւններում երևան եկող տարբերութիւնները առերևույթ են և վերանում են, երբ նկատի ենք ունենում հայերենի մի շարք հնչյունական օրենքներ: Ինչպես տեսնում ենք, վերջավորութիւնների տարբերութիւնները երևան են գալիս եզակի թվի երրորդ և հոգնակի թվի երկրորդ դեմքերում, այսինքն՝ այնտեղ, որտեղ առկա է յ ձայնորդը, Յ ձայնորդը տարբեր խոնարհիչների մոտ տարբեր դրսևորումներ է

¹ Ո խոնարհման միակ ներկայացուցիչը՝ զամ բայը խոնարհւում է նույն վերջավորութիւններով՝ զոմ, զոս, զոյ, զոմք, զոյք, զոն:

ստանում: Ի և Ն (ն) հնչյունների կողքին յ-ն ընկնում է, որը բացատրվում է նրանց հնչակցությամբ: Ե ձայնավորի մոտ գտնվելով յ-ն միանում է ե-ին և կազմում եյ երկբարբառը, որը վեր է ածվում է-ի: Ա-ի կողքին յ-ն պահպանվում է: Այսպիսով ստացվում է ի+յ=ի, ու+յ=ու, հ+յ=է, ա+յ=այ: Ինչպես տեսնում ենք, միայն ա խոնարհման մեջ է, որ յ-ն հանդես է գալիս չեզոք ձևով:

Նույն դիմային վերջավորություններով է խոնարհվում նաև եմ էական բայը, որը հնդեվրոպական լեզվի բայերի հնագույն՝ անբուն տիպի մի մնացորդ է: Այս բայի արմատն է ե, որ ծագում է հնդեվրոպական *es- արմատից: Ատանալով ներկայի վերջավորությունները, էական բայի խոնարհումն ունենում է հետևյալ պատկերը:

ե-մ	ե-մք
ե-ս	է-ք (/էյ-ք)
է (/է-յ)	ե-ն

Եմ-ի խոնարհման ամբողջ ձևերը համեմատելով ե խոնարհման բայերի վերջավորությունների հետ, առաջին հայացքից կարելի է այն տպավորությունը ստանալ, որ բայերի խոնարհումը կատարվում է էական բայի խոնարհված ձևերի միջոցով: Եվ, իրոք, այդպիսի կարծիքներ հայտնվել են¹:

Ասկայն այդ կարծիքն անմիջապես ժխտվում է, երբ նկատի ենք առնում եմ էական բայի և ե բնի ձայնավորի (կամ խոնարհիչի) ծագումը: Համեմատական քերականության տվյալներով ապացուցված է, որ եմ բայը ծագում է հնդեվրոպական անբուն տիպի *es-mi նախաձևից, որին համապատասխանում են հնդեվրոպական լեզուներում ավանդված բազմաթիվ այլ ձևեր: Հին հայերենում հնդեվրոպական *es- արմատից պահպանվել է միայն ե ձայնավորը, իսկ *-mi վերջավորությունից m-ն որից ստացվել է եմ ձևը:

Քերեմ բայը ծագում է հնդեվրոպական *bhero նախաձևից՝ հն. fēro լտ. fero, գոթ. baira գրեթե հմա: Մյուս դեմքերում երևան է գալիս բնի ձայնավորի ձայնդարձի e աստիճանը, ինչպես օրինակ՝ հն. fēreis գրեթե հս, fērei գրեթե է, հուլ. береша, беретъ և այլն: Հայերենի քերեմ բայի ե խոնարհիչը համապատասխանում է հնդեվրոպական բնի e ձայնավորին, որը հայերենում ընդհանրացել է բոլոր դեմքերում: Այստեղից, ահա, պարզ է դառնում, որ հայերենի ե խոնարհիչը ոչ մի կապ չի կարող ունենալ էա-

¹ Н. Я. Марр, Грамматика древнеармянского языка. Этимология. 1903, СПб., стр. 162.

կան բայի ե արմատի հետ: Այդ խաբոսիկ տպավորութիւնը առաջանում է նրանից, որ էական բայարմատը՝ ե և բերե բունը ստանում են միևնույն -մ, -ս, -յ, -մք, -յք, -ն դիմային վերջավորութիւնները: Տարբերութիւնը կայանում է միայն նրանում, որ էական բայը խոնարհվում է առանց բնի ձայնավորի, այսինքն՝ վերջավորութիւններն անմիջաբար միանում են բայարմատին:

Այժմ անցնենք ներկայի դիմային վերջավորութիւնների քըն-նությանը: Դիմային վերջավորութիւնների ստուգաբանութիւնը զբաղեցրել է հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրությամբ զբաղվող համարյա բոլոր լեզվաբաններին, և այդ հասկանալի է, քանի որ թեքական ձևերի ցեղակցության հայտնաբերումը հանդիսանում է անհրաժեշտ պայմաններից մեկը լեզվի ծագումը որոշելու գործում:

Հայերենը համեմատական մեթոդով առաջին ուսումնասիրողները (Պետերման, Վինդիշման, Բուպպ, Ֆր. Մյուլլեր և այլն), ելնելով հայերենի հնգիրանական ծագման տեսութիւնից, հայերենի բոլոր դիմային վերջավորութիւնները հանգեցնում էին հնգիրանական վերջավորութիւններին: Առաջինը, Հյուբշմանն էր, որն իր «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների սիստեմում»¹ աշխատությամբ (1875) հերքից հայերենի հնգիրանական ծագման տեսութիւնը և ապացուցեց, որ հայերենը անկախ հնդեվրոպական մի լեզու է: Հյուբշմանի այս հայտնագործությամբ հայերենի ուսումնասիրութիւնը բոլորովին նոր հոնի մեջ դրվեց: Մանրակրկիտ կերպով ուսումնասիրելով հայերենի հնչունական կազմը և բառապաշարը, Հյուբշմանը, սակայն, հարկ եղածին չափ չանդադարձավ նրա ձևաբանությանը:

Հյուբշմանից հետո եվրոպացի և հայ մի շարք լեզվաբաններ առաջ տարան և ավելի խորացրին հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրութիւնը: Այդ լեզվաբանների մեջ հատկապես մեծ է Մեյերի և Աճառյանի մատուցած ծառայութիւնը:

Հայերենի ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքի մ վերջավորութիւնը հնդեվրոպական մյուս լեզուների համեմատությամբ հեշտությամբ բացատրվել է, այդ պատճառով տարակարծութիւնների տեղիք չի տվել:

Առաջին դեմքի մ վերջավորութիւնը ծագում է հնդեվրոպական լեզվի անբուն տիպի *-mi վերջավորութիւնից: Հայերենում,

¹ H. Hübschmann, Über die Stellung der Armenischen im Kreise der indogermanischen Sprachen.

ինչպես *mi, այնպես էլ եզակի թվի մյուս վերջավորություններում, պահպանվել են միայն առաջին հնչյունները, իսկ վերջին i-ն բոլոր դեմքերում ընկել է¹:

Հայերենի բայերի խոնարհման եզակի թվի առաջին դեմքի մ վերջավորությունը նախնական է միայն ե-մ էական բայում, քանի որ այդ վերջավորությունը հնդեվրոպական լեզվում հատուկ էր միայն անբուն տիպի բայերին: Եւ բայը հնդեվրոպական լեզուներում ունի հետևյալ համապատասխանությունները, որոնք ծագում են *esmi նախաձևից, սնս. as-mi, զնդ. ah-mi, հն. ei-mi, հսլ. ec-мъ, լիտ. es-mi, գոթ. i-m, իռլ. a-m, ալբ. ja-m, հիսլ. e-m, լատ. s-um, խեթ. es-mi, հյ. ե-մ:

Բնավոր տիպը հնդեվրոպական հիմնալեզվի առաջին դեմքում ունի *o, հն. fero, լատ. fero, գոթ. baira, հսլ. бepy «բերում եմ»: Բայց հին հայերենում անբուն տիպի -mi վերջավորությունը տարածվել է նաև բնավոր բայերի վրա և դարձել եզակի թվի 1-ին դեմքի միակ վերջավորությունը: Այդ պատճառով վերոհիշյալ բայերի դիմաց հայերենում ունենք բերե-մ ձևը:

Այդ նույն երևույթը դիտվում է նաև այլ լեզուներում: Այսպես օրինակ՝ բերեմ բային սանսկրիտում համապատասխանում է bhārami ձևը, հիռլ. berim, սերբ. bērem, տրտեղ m-ն երկրորդական ծագում ունի: Սանսկրիտում ևս -mi վերջավորությունը դուրս է մղել -o տիպը և տարածվել բայական բոլոր խմբերի վրա: Խեթերենում -mi խոնարհումը, որը գոյություն ունի -hi խոնարհման կողքին, ընդգրկում է ոչ միայն անբուն, այլև բնավոր տիպի բայերը: Հին սլավոններենում m-ն պահպանվել է անբուն տիպի չորս բայերի եզակի թվում՝ есмь, дамь, емь, вемь:

Եզակի թվի 2-րդ դեմքի ս վերջավորությունը ծագում է հնդեվրոպական հիմնալեզվի *-si վերջավորությունից, որն ընդհանուր էր բնավոր և անբուն տիպերի համար:

Այսպես օրինակ, եւ և բերեմ բայերը եզակի երկրորդ դեմքում ունեն հետևյալ զուգահեռները.

հնդկ. *esi, essi	հնդկ. *bhere-si
սնս. ā-si	սնս. bhāra-si
զնդ. a-hi	զնդ. bhara-hi
հն. e-i	հն. ferei-s
աբբ. je	գոթ. bairi-s
հոմ. es-si	հվգ. biri-s

¹ Միայն հնդիրանական լեզուներն են, որ ներկայի եզակի թվի վերջավորությունները պահպանել են առանց ձևափոխության՝ - mi, - si, - ti:

հին լտ. es-s

լտ. e-s

գոթ. i-s

հիսլ. e-s

լիտ. e-si

հսլ. e-cы

հյ. b-u

լտ. fer-s¹

իռլ. biri

իթ. kue-ši (սխալում է)

հսլ. боре-и

հյ. բերե-и

Si վերջավորությունը հին հայերենում հեշտությամբ բացատրվում է միայն էական բայում, մյուս բայերում երկրորդ դեմքի և վերջավորության ծագման պարզաբանումը դժվարություն է ներկայացնում: Դրա պատճառն այն է, որ քսոս հնչյունական օրենքի S-ը հայերենում երկու ձայնավորների միջև վեր է ածվում յ-ի և հնդեվրոպական *bheresi նախաձևից հայերենում պետք է ստացվեր ոչ թե բերես, այլ բերէ:

Բնավոր բայերի եզակի թվի 2-րդ դեմքը բացատրելու համար հայտնվել են մի շարք կարծիքներ:

Ֆր. Մյուլլերը և վերջավորության առաջացման հարցն առանձին քննարկման նյութ դարձնելով այդ վերջավորության առաջացման համար առաջարկում է երեք ճանապարհ. 1. ենթադրելով, որ իրանական S-ն հայերենում դարձել է u, նա գտնում է, որ հայերենի եզակի 2-րդ դեմքի u-ն (բերե-и) առաջացել է զենդերենի ըղձական եղանակի միջին սեռի անգակի երկրորդ դեմքի bharaesā ձևից: 2. Հնդեվրոպական *bheresi ձևից հայերենում ստացվել է բերէ, որին այնուհետև կցվել է հայկական ու հողը, ինչպես կիևս և այլն, և այդպիսով առաջացել է բերես ձևը: 3. Բերես ձևն առաջացել է *bharaisi-ից, որից առաջացել է և հն. fereis ձևը²:

Մյուլլերի այն ենթադրությունը, որ հայերենի u-ն առաջացել է իրանական Ֆ-ից, սխալ է, քանի որ հայերենն իրանական լեզու չէ, այլ անկախ հնդեվրոպական մի լեզու, այնպես որ հայերենի սահմանական եղանակի երկրորդ դեմքի u-ն չէր կարող առաջանալ զենդերենի ըղձական եղանակի միջին սեռի բայերի եզակի երկրորդ դեմքի վերջավորությունից:

Երկրորդ դեմքի u վերջավորության առաջացումը հայերենի և հողից միանգամայն անհիմն է, քանի որ u հողը վերաբերում է առաջին դեմքին և ոչ մի կապ չի կարող ունենալ երկրորդ դեմքի

¹ Հատկենենում այս ձևը կորցրել է բնի ձայնավորը:

² Fr. Müller, W. Sitzungsbericht, hh 78, 88.

հետ, եթե հաշվի չառնենք նույնիսկ այն հանգամանքը, որ լեզուների պատմության մեջ երբեմն չի դիտվել այն երևույթը, որպեսզի գոյականների հոդը, թեկուզ համապատասխան դեմքի, կցվելով բային վերածվեր դիմային վերջավորության:

Վերջապես 3-րդ ճանապարհը նույնպես ժխտվում է, քանի որ հնդեվրոպական լեզուներում պահպանված ձևերը ենթադրել չեն տալիս ամենևին այդ *bharaisi նախաձևի գոյությունը, որից առաջացած լիներ բերեւ-ը, և եթե նույնիսկ ընդունենք էլ այդ նախաձևի գոյությունը, ապա հնչյունական զարգացմամբ դրանից հայերենում բերեւ չէր ստացվի: Այսպիսով, Մյուլլերի ենթադրությունները հայերենի եզակի երկրորդ դեմքի ա-ի առաջացման մասին միանգամայն ժխտելի են:

Եզակի թվի երկրորդ դեմքի ա-ի առաջացման հարցը շոշափելով՝ Հյուբշմանը ընդհանրապես ժխտում է այդ վերջավորության առաջացման բացատրության հնարավորությունը, քանի որ *bheresi նախաձևից, որը վերականգնվում է մյուս հնդեվրոպական լեզուների հիման վրա, հնչյունական զարգացման օրենքի համաձայն չէր կարող հայերենում բերեւ ստացվել¹:

Նշելով հնդեվրոպական S-ը երկու ձայնավորների միջև յ-ի վերածվելու փաստը, Մեյեն բացատրում է միայն էական բայի երկրորդ դեմքը, իսկ մնացած բայերում ա-ն նրա ենթադրությամբ առաջացել է էական բայի երկրորդ դեմքի ա վերջավորության նմանողությամբ²:

Կ. Բրուսմանը նույնպես այս հարցի առթիվ ավելին ոչինչ չի ասում և հայտնում է այն կարծիքը, որ ռինչպես բերեւ-ը առաջացել է ըստ եմ-ի, այնպես էլ բերեւ-ը առաջացել է ըստ եա-ի³:

Նկատի ունենալով հնդեվրոպական *bheresi-ից բերեյ>բերէ ստացվելու հանգամանքը, Ալեքսանդր Տոմսոնը գտնում է, որ բնավոր բայերի 2-րդ դեմքի ա վերջավորությունը փոխանցվել է էական բայի երկրորդ դեմքից (ե-ա-ից): Այդ նա բացատրում է հետևյալ կերպ: Քանի որ էական բայը մի շարք դեմքերում ունեցել է նման վերջավորություններ և խոնարհման բնավոր բայերի հետ, ապա էական բայի ա վերջավորությունը տարածվել է նաև և խոնարհման բնավոր բայերի երկրորդ դեմքի վրա: Ե խոնարհումից հետո երկ-

¹ H. Hübschmann, Armenische Studien, I, Leipzig, 1883, էջ 95:

² A. Meillet, Esquisse d'une grammaire comparée l'arménien classique, Vienne, 1936, էջ 118:

³ K. Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, Strassburg, 1916, 4. II, էջ 604:

որորդ դեմքի *ս*-ն հաղորդվել է նաև մյուս խոնարհումներին: Այսպիսով, Տոմսոնը գալիս է այն եզրակացության, որ եզակի թվի երկրորդ դեմքի *ս* վերջավորությունն առաջացել է հայերեն լեզվի հիման վրա և միայն էական բայի *ս*-ն է, որ ունի հնդեվրոպական ծագում, իսկ բերես, աղաս, թողուս և այլն ձևերը նորագոյացումներ են¹:

Թեև էական բայի ազդեցությունն անփասելի է բնավոր բայերի երկրորդ դեմքի վրա, բայց և այնպես այսպիսի մոտեցումը մեզ ճիշտ չի թվում:

Թեև էական բայի երկրորդ դեմքի *ս*-ն ուղղակիորեն փոխանցվել է բնավոր բայերի վրա, ինչպես որ պատկերացնում է Ա. Տոմսոնը, ապա եզակի երկրորդ դեմքում կունենայինք ոչ թե բերես, այլ բերէս, քանի որ հնդեվրոպական *bheresi-ից պետք է բերէ ստացվեր:

էական և բնավոր բայերի ազդեցությունը մեր կարծիքով սկսվել է ոչ թե հայերենը կազմավորվելուց հետո, որտեղ, ինչպես ենթադրում է Ա. Տոմսոնը, սկզբում առաջացել են բերէ, աղայ, թողու ձևերը և հետո միայն էական բայի *ս* վերջավորության շնորհիվ դարձել բերես, աղաս, թողուս, այլ այդ ազդեցությունը եղել է դեռևս շատ հնում, հայերենի կազմավորման շրջանից հենց սկսած: Մենք ենթադրում ենք, որ այդ ազդեցության հետևանքը, եղել է ոչ թե այն, որ *ս* վերջավորությունը էական բայից փոխանցվել է մնացած բայերին, այլ այդ ազդեցության շնորհիվ բնավոր բայերում *ս*-ի ձևափոխություն տեղի չի ունեցել և այն պահպանվել է էական բայի 2-րդ դեմքի նմանողությամբ, *ս*-ի պահպանումն արդարացնելու համար կարելի է հաշվի առնել երկու կարևոր մոմենտ: Առաջինը այն է, որ *ս*-ի անկումով եզակի թվի 2-րդ և 3-րդ դեմքերը լիովին կհամընկնեին մեկը մյուսին, որի պատճառով մեծ շփոթություն կառաջանար: 2. Հայերենի բնավոր և անբուն (էական) բայերի դիմային վերջավորությունների կազմավորման պրոցեսում շատ ուժեղ է եղել միօրինակության ձգտումը, որը կարող էր խանգարել հնչյունական օրենքների բացարձակ տարածմանը:

Այնուհետև, մեզ հայտնի հնչյունական օրենքները կարող էին խախտվել այլ հնչյունական օրենքների ազդեցությամբ, որոնց գործունեությունը այժմ մթափնել և անճանաչելի է դարձել:

Լեզուներում դիտվող շեղումներն այս կամ այն հնչյունական օրենքից պատահականություններ չեն, այլ արդյունք՝ լեզվի զար-

¹ А. Томсон, Лингвистические исслед. СПб, 1887, стр. 95.

գացման տվյալ շրջանում գոյություն ունեցած ալլեայլ երևույթների, որոնք նույնպես օրինաչափ են այդ լեզվի զարգացման տվյալ շրջանում:

Այժմ քննենք եզակի թվի 3-րդ դեմքի առաջացումը, որտեղ տվյալ հարցի հետ կապված՝ մենք դարձյալ կանդրադառնանք եզակի 2-րդ դեմքին:

Հնդեվրոպական հիմնալեզվի եզակի թվի 3-րդ դեմքի *-ti վերջավորությունը հայերենում ներկայացված է որպես յ: Այս վերջավորությունը փոքր ձևափոխություններով լավ է պահպանվել հնդեվրոպական լեզուներում: Այսպես օրինակ՝ հնդեվրոպական *bhereti նախաձևից լեզուներում պահպանվել են հետևյալ ձևերը. սնս. bháratī, ղնդ. báraitī, հն. fērei, իռլ. berid, գոթ. bairith, հվգ. berit, հսլ. берей, լտ. fert, խթ. kuenzi (<kuenti «խփում է»), հյ. բերէ:

Հայերենի բերէ ձևը միանգամայն համապատասխանում է վերոհիշյալ ձևերին, Ըստ հայերենի հնչյունական զարգացման *bhereti նախաձևի *-ti վերջավորության t-ն երկու ձայնավորների միջև գտնվելով պետք է վերածվեր յ-ի, իսկ վերջին i-ն՝ ընկներ. դրանից կստացվեր բերեյ > բերէ ձևը, որ և մենք ունենք եզակի թվի երրորդ դեմքում: Ա խոնարհման մեջ (աղայ) յ-ն, որը ներկայացնում է նախնական t-ն, երևան է գալիս առանց միացության:

Քննվոր բայերի եզակի թվի երրորդ դեմքի վերջավորությունը հայերենում հեշտությամբ բացատրվել է, այդ պատճառով էլ հնդեվրոպական լեզուների համեմատական քերականությամբ զբաղվող լեզվաբանների մոտ ալլեայլ ենթադրությունների կամ տարակուսանքի տեղիք չի տվել:

Այնինչ էական բայի եզակի երրորդ դեմքը հայտնի հնչյունական օրենքներով չի բացատրվում: Այդ դեմքը հնդեվրոպական լեզուներում ունի հետևյալ դրսևորումները. հնդեվր. *es-ti, սնս. as-ti. ղնդ. as-ti, հն. es-ti, լտ. es-t, գոթ. is-t, իռլ. is, լիտ. es-ti, հսլ.

¹ Զմեակելով եզակի երրորդ դեմքի յ-ի հնդեվրոպական *-ti-ից առաջացած լի-նելու հնարավորությունը, պրոֆ. Գ. Ղափանցյանը միևնույն ժամանակ ավելի հավանական է համարում, որ այդ վերջավորությունն առաջացել է խեթական երրորդ դեմքի —i-ից, Օրինակ՝ խեթ. vaštal «մեղանշում է», pal «ապրիս է» և այլն: Г. Капанцян, К происхождению армянского языка, Ереван, 1946, էջ 24): Պրոֆ. Ղափանցյանի այս ենթադրությունը, անշուշտ, ընդունելի չէ, քանի որ ապացուցված է, որ խեթական եզակի երրորդ դեմքի չի վերջավորությունը համապատասխանում է հնդեվրոպական *-ti-ին, որին համապատասխանում է և հայերենի յ-ն, այլ կերպ ասած, հայերեն յ-ն ներկայացնում է ոչ թե խեթերենի i-ի հետագա զարգացումը, այլ նրա զուգահեռը՝ առաջացած միևնույն *-ti վերջավորությունից: 222

ec-մե. Այս ձևերի դիմաց հայերենում ունենք ն, որը չի բացատրվում վերոհիշյալ համապատասխանությունների շարքով: Հընդ-
 ավորական *esti նախաձևից հայերենում պետք է ստացվեր ոչ թե
 է, այլ եստ, քանի որ ըստ հնչյունական զարգացման վերջին ձայ-
 նավորը հայերենում ընկնում է, իսկ է-ն s-ից հետո՝ պահպանվում,
 ինչպես որ ունենք զ-գեստ բառում, որին համապատասխանում են
 լտ. vestis, պրս. vaste և այլն (հմմտ. նաև հյ. հաեստ, սաքս. fast,
 հյ. փեստ, լիտ. lazda և այլն):

էական բայի եզակի երրորդ դեմքը թեև հնչյունական զար-
 գացմամբ չի բացատրվում, բայց և այնպես այն նման է բնավոր
 բայերի եզակի թվի երրորդ դեմքին, որը միանգամայն համապա-
 տասխանում է մյուս լեզուներում վկայված համապատասխան
 ձևերին: Այդ պատճառով պետք է ենթադրել, որ այդ դեմքը կազմ-
 վել է բնավոր բայերի եզակի երրորդ դեմքի ազդեցությամբ:

Քննելով հայերենի եզակի թվի վերջավորությունների առաջաց-
 ման խնդիրը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ այս հար-
 ցում բավականին մեծ դեր է կատարել էական և բնավոր բայերի
 դիմային վերջավորությունների փոխադարձաբար միմյանց վրա
 ներգործելու հանգամանքը:

էական բայի ազդեցությունը նկատելի է դեռևս շատ վաղ ժա-
 մանակներից, երբ եզակի թվի 1-ին դեմքի *-mi վերջավորու-
 նը տարածվել է բնավոր բայերի վրա, և այդ պատճառով հն. fero,
 լտ. fero գոթ. baira և այլն ձևերի դիմաց հայերենում ստացվել
 բերե-մ, հաճե-մ և այլն:

Այսպիսով, ինչպես բնավոր բայերի եզակի 2-րդ դեմքի
 (բերես < *bheresi), այնպես էլ էական բայի եզակի 3-րդ դեմքի
 (է < *es-ti) վերջավորությունների կազմավորման պրոցեսում վրճ-
 ոական դեր է կատարել միասնականացման տենդենցը, որը մեծ
 ազդեցություն է գործել հայերենի խոնարհման համակարգի կազ-
 մավորման վրա:

Հոգնակի թվի առաջին դեմքը բոլոր խոնարհումներում -մք է:
 Այդ վերջավորությունը հնդեվրոպական լեզուների բնավոր և ան-
 բուն բայերում ունի հետևյալ դրսևորումները.

սնս. bhāra-mas	սնս. s-māh (mas)
զնդ. bhara-mahi	զնդ. mahi
ատտ. fero-men	գոր. ei-mēs
դոր. fero-mes	լտ. su-mus
հվգ. bera-mes	
հալ. бєре-мъ	

գոթ. baira-m	իռլ. am-mi
լատ. feri-mus	գոթ. sijū-m
իռլ. bera-m	լիտ. ės-mi
ալբ. puth(e)-me	հսլ. ec-мъ
լիտ. vėda-me	հյ. հ-մք
հյ. բերե-մք	

Հնդեվրոպական լեզուների բայերի հոգնակի թվի առաջին, ինչպես նաև երկրորդ դեմքի վերջավորությունները հանդես են գալիս շատ ձևափոխված և խառը վիճակում, որի պատճառով հնարավոր չի եղել դրանց նախաձևերը վերականգնել: Հոգնակի թվի առաջին դեմքի վերջավորությունների մեջ բոլոր լեզուներում էլ առկա է Մ տարրը, իսկ մյուս հնչյուններում արդեն միօրինակությունը բացակայում է: Այդ վերջավորությունների դիմաց հայերենում ըստ հնչյունական զարգացման պետք է լիներ միայն մ, քանի որ վերջին հնչյունները հայերենում կընկնեին: Բայց, հակառակ սպասածի, մ-ի հետ միասին հոգնակի առաջին դեմքում գտնում ենք նաև ք:

Այժմ անցնենք հոգնակի թվի 2-րդ դեմքի առաջացման հարցին, իսկ այնուհետև ընդհանուր կերպով կքննենք ք-ի առաջացումը, քանի որ այդ վերջավորությունը երևան է գալիս նաև հոգնակի թվի 2-րդ դեմքում:

Հոգնակի թվի երկրորդ դեմքն ունի յֆ վերջավորությունը: Համեմատություն համար դարձյալ վերցնենք քերեմ և եմ բայերը և համապատասխան ձևերը հնդեվրոպական մի շարք լեզուներում.

	սնս. s-tha
սնս. bhāra-tha	զնդ. s-ta
հն. fere-te	հն. es-te
լատ. fer-tis	լատ. es-tis
իռլ. beri-d	լիտ. ės-te
գոթ. bairi-th	գոթ. sijū-th
հսլ. беpe-me	հսլ. ec-me
հյ. բերե-յք (>բերէք)	հյ. հ-յք (>էք)

Հայերենի հոգնակի թվի երկրորդ դեմքի յֆ վերջավորության յ-ն հեշտությամբ բացատրվում է սնս. bharatha, հն. ferete, հսլ. бeрeтe ձևերի համեմատությամբ: Ե-ն երկու ձայնավորների միջև հայերենում վեր է ածվում յ-ի և բնի ձայնավորին միանալով

տալիս է է՝ բերէ: Ինչ վերաբերում է ք-ին, ապա այստեղ համեմատութիւնը չի լուսաբանում նրա ծագումը:

Ք-ի առաջացման հարցն ընդհանրապես զբաղեցրել է շատ լեզվաբանների, և նրա առեղծվածային բնույթը տեղիք է տվել բազմաթիվ ենթադրութիւնների: Մինչև այժմ էլ լեզվաբանները դժվարանում են ք-ի առաջացման մասին սպառիչ փացատրութիւն տալ, և նրա ծագումը մնում է դեռևս լիովին չլուսաբանված:

Ք վերջավորութիւնը հին հայերենում բայերի հոգնակի առաջին և երկրորդ դեմքերից բացի երևան է գալիս նաև գոյականների հոգնակի թվի ուղղական և գործիական հոլովներում և անձնական դերանունների հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերում (մեք, գուք):

Ք-ի առաջացման մասին հայտնված կարծիքներն ի մի բերելով, կարելի է դրանք բաժանել երկու խմբի: Լեզվաբանների մի մասը, ընդ որում մեծ մասը, գտնում է, որ ք-ն ունի հնդեվրոպական ծագում. մյուս մասը ժխտում է այս տեսակետը և գտնում, որ ք-ն հայերենում հետագայի հավելում է՝ ոչ-հնդեվրոպական լեզուներից փոխ առնված մի վերջավորութիւն: Սկզբունքորեն տարբեր այս երկու տեսակետներից ելնելով՝ տարբեր լեզվաբաններ տարբեր ձևով են բացատրում այդ վերջավորութիւն առաջացման պրոցեսը:

Ֆրանց Բոպպը հայտնում է այն միտքը, որ հոգնակի թվի առաջին դեմքի ք-ն հանդիսանում է սանսկրիտի նույն դեմքի mas վերջավորութիւնի s-ի ձևափոխութիւնը: Ընդունելով, որ հյ. ք-ն համապատասխանում է հնդեվրոպական s-ին, այնուհետև Բոպպը հոգնակի երկրորդ դեմքի էք վերջավորութիւնը համեմատում է լատինների tis (fertis), սանսկրիտի երկակի թվի thas (bhāra-thas) և գոթերենի նույն թվի ts (baira-ts) վերջավորութիւնների հետ: Բոպպը բերէ՝ ձևի առաջացման պրոցեսը պատկերացնում է այսպես. բերեա > բերեաք > բերէք¹:

Ֆ. Մյուլլերը և Բ. Պատկանյանը ք-ի առաջացման հարցում պաշտպանում են Բոպպի հայտնած տեսակետը: Պատկանյանը գրում է ք-ն նախնական s-ի ձևափոխութիւնն է՝ և բացատրում է այսպես. սկզբնական mas, tas ձևերին հայերենում համապատասխանում է մս և տս, ս = ք, տ = յ: Այսպիսով 1-ին դեմքում mas-ը դարձել է մս > մք և 2-րդ դեմքում՝ tas > տս > յս > յք: Պատկան-

¹ Fr. Bopp, Vergleichende Grammatik der indogermanischen Sprachen, Berlin, 1857, B. II, էջ 273:

յանը 2-րդ դեմքի յ ֆ վերջավորութիւնը համեմատում է լատիներենի հոգնակի երկրորդ դեմքի *tis* և ոուսերենի *te* վերջավորութիւնների հետ¹։

Ս. Տերվիշյանը գտնում է, որ հայերենի հոգնակի թվի 1-ին դեմքի մ ֆ վերջավորութիւնն առաջացել է *masi* կամ *mas* ձևերից. հետևաբար եմֆ-ը = է **as-masi* և իցեմֆ-ը **as-ya-mas* ձևերին²։ Հոգնակի երկրորդ դեմքի ֆ-ն Տերվիշյանը ենթադրում է, որ առաջացել է *tu* կամ *su*-ից³։

Հ. Հյուբշմանը հայտնում է այն տեսակետը, որ հայերենի ֆ-ի ծագումն ընդհանրապես պետք է անբացատրելի համարել, քանի որ ըստ հնչյունական զարգացման վերջին S-ը հայերենում պետք է ընկնէր։ Հյուբշմանը հնարավոր է համարում անել այն ենթադրութիւնը, որ ընդհանրապես ֆ-ն հայերենում առաջացել է վերջին *SV*-ից⁴։

Ս. Բուզդեան այս հարցում դարգացնում է Հյուբշմանի հայտնած տեսակետը, նախ և առաջ նա համեմատում է հայերենի հոգնակի թվի ֆ վերջավորութիւնը հնդեվրոպական լեզուների համապատասխան ձևերի հետ և գտնում է, որ հայերենի ֆ և հնդեվրոպական *es* վերջավորութիւնն միջև ակնհայտ կապ գոյութիւն ունի, Այսպես որինակ, սնս. *pitaras*, հն. *pateres*-ին հայերենում համապատասխանում է հարֆ, տնս. *duhitaras*, հն. *dugateres* ձևերին հայերենում՝ զստեւֆ և այլն։ Նույն ձևով նա ենթադրում է, որ բայական վերջավորութիւններում ֆ-ն համապատասխանում է հնդեվրոպական *es*-ին, այսպես՝ սնս. *smas*, հն. *esmes*, հյ. եմֆ, Բայց և այնպէս Բուզդեան գտնում է, որ հայերենի ֆ-ն հնդեվրոպական S-ի ձևափոխութիւնը չէ, այլ փոխարինում է հնդեվրոպական *SV*-ին, քանի որ բառավերջում գտնվելով՝ S-ը հայերենում կընկնէր։ Ք-ն կարող էր առաջանալ նախահայկական *-*esv(-sv)*-ից, իսկ վերջինս կարող էր առաջացած լինել հնդեվրոպական *-es(-s)*-ից, վերջահար (էնկլիտիկ) -*v*-ի կցումով։ Բուզդեան ենթադրում է, որ այդ *v*-ն նույնական է սանսկրիտի վերջահար կերպով գործածվող *u*-ի հետ։ Ս-ն Բուզդեի կարծիքով հնդեվրոպական հիմնալեզվում,

¹ К. Патканов, Исследование о составе армянского языка, СПб, 1884, էջ 82։

² Սկզբնական շրջանի հնդեվրոպարանները (Բոպպ, Մյունխեն, Տերվիշյան և այլն) էական բայի արմատը համարում էին *as*-ը և ոչ՝ *es*-ը, ինչպես հետազայում արարցուցվեց։

³ Ս. Տերվիշյան, Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս, 1885, էջ 151—152։

⁴ H. Hübschmann, Armenische Studien, I, Leipzig, 1883, էջ 20, 95։

ինչպես և սանսկրիտում, մի մասնիկ էր, որը հնդեվրոպական լեզուներում դառնում է անունների և բայերի թեքությունների մի տարրը: Այսպես օրինակ, սնս. bharavant-ս, դոթ. asteigadau (-ada-ս), հն. pan-ս և այլն: Այսպիսով, Բուզգեն հայերենի հոգնակի թվի առաջին դեմքի եմֆ վերջավորությունը բացատրում է *esmesv, ախինքն՝ *esmes-v նախաձևով¹:

Հյուբշմանի և Բուզգեի տեսակետը Բ-ն sv-ից առաջացած լինելու մասին թեև անհիմն է, բայց լեզվական բավականաչափ տվյալներ չլինելու պատճառով մնում է որպես ենթադրություն:

Կ. Բրուզմանը ընդգծում է, որ հայերենի տամֆ-ը նման է լատինների damus-ին, բայց թե հայերենի Բ-ն ինչպես է առաջացել, հրաժարվում է պատասխանելու: Միևնույն ժամանակ Բրուզմանը անհնարին չի համարում Բ-ի առաջացման մասին Հյուբշմանի և Բուզգեի արած ենթադրությունը²:

Հ. Պեդերսընը քննելով հնդեվրոպական s վերջատառով բոլոր դեպքերը գոյականների հոլովման և բայերի խոնարհման մեջ՝ գալիս է այն եզրակացության, որ հնդեվրոպական վերջին s հնչյունը հայերենում դառնում է ֆ: Նա գտնում է, որ հոգնակի առաջին դեմքի մֆ վերջավորությունը համապատասխանում է հնդեվրոպական *-mes վերջավորությանը: Հոգնակի երկրորդ դեմքի վերջավորությունը Պեդերսընը համեմատում է լատինների հոգնակի թվի երկրորդ դեմքի -tis վերջավորության հետ (scribitis): Էֆ-ը նրա կարծիքով առաջացել է *-eyes-ից, իսկ վերջինս էլ *-etes-ից: Վերջատառ s-ը Պեդերսընի կարծիքով փոխվել է ճ-ի, իսկ վերջինս էլ «խտանալով» Բ-ի է վերածվել³:

Ա. Մեյեն «Դասական հայերենի համեմատական քերականության ուղղագծի» առաջին հրատարակության մեջ (1903 թ.) գրում է. «Փ-ն անբացատրելի մի հավելում է» (էջ 89), նույն աշխատության երկրորդ հրատարակության մեջ Մեյեն հայերենի հոգնակի երկրորդ դեմքի յֆ վերջավորությունը այլևս միանգամայն անբացատրելի չի համարում և համեմատում է լատինների -tis վերջավորության հետ⁴:

¹ S. Bugge, Beiträge zur etymologischen Erläuterung der armenische Sprachen, Christiania, 1889, էջ 43—44:

² K. Brugmann, Grundriss..., 1913—1916, B. II, T. III, L. I, էջ 101, B. II, T. III, էջ 619:

³ Հ. Պեդերսըն. նպաստ մը հայ լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 26—28, 48:

⁴ A. Meillet. Esquisse..., 1936, էջ 119:

2. Աճառյանը այն կարծիքն է հայտնել, որ հայերենի բայերի հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքի ք-ն համապատասխանում է հնդեվրոպական S-ին: Նա գրում է. «Հայերենի բոլոր խոնարհումների հոգնակի թվի առաջին դեմքի վերջավորությունն է -մք, որ ճշտությամբ համապատասխանում է սանսկրիտի -mas ձևին, ընդ որում, հնդեվրոպական հոգնակի թ. S ձևի համապատասխանությունը հայերենում ք է: Հոգնակի թվի երկրորդ դեմքի վերջավորություններն են բոլոր խոնարհումներում՝ -էք, -իք, -այք, -ուք: Այս ձևերում ք վերջավորությունը անկասկած հանդիսանում է սանսկրիտի հոգնակի թվի միևնույն S վերջավորությունը»¹:

Խ. Բարթոլոմեոսն հայերենի ք վերջավորությունը բացատրում է -tva ետադաս մասնիկով²:

Քննելով հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի ք-ի առաջացման մասին հայտնված կարծիքները, տեսնում ենք, որ լեզվաբանների մեծ մասը ընդունել է ք-ի հնդեվրոպական ծագումը: Այդ տեսակետն են պաշտպանել Բոպպը, Մյուլլերը, Պատկանյանը, Տերվիշյանը, Բրուգմանը, Պեդերսընը, Մելին, Աճառյանը և ուրիշները:

Ք-ի հնդեվրոպական ծագումը նշելով, սակայն, վերոհիշյալ լեզվաբանները դժվարացել են լիովին լուսաբանել այդ հարցը, քանի որ մեր լեզվի դարավոր պատմությունը չնչել է այն օղակները, որոնց միջով անցնելով հնդեվրոպական S-ը հայերենում վեր է ածվել ք-ի:

Բայերի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերում երևան եկող ք-ի ծագման վերաբերյալ առանձնակի մոտեցում ունի Ա. Տոմսոնը: Քննելով հայերենի ներկայի դիմային վերջավորությունների առաջացման հարցը և հատկապես կանգ առնելով ք-ի վրա, Տոմսոնը հայտնում է այն տեսակետը, որ բայերի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերում երևան եկող ք-ն թեև ծագումով հնդեվրոպական է, բայց հետագայի հավելում է, որը փոխանցվել է բայերին դերանուններից: Իսկ գերանունների մեջ երևան եկող ք-ն գոյականների հոգնակի թվի ք վերջավորության հետ միասին ընդհանուր ծագում ունի և գալիս է հնդեվրոպական լեզվից: Ք վերջավորության դերանուններից բայերին փոխանցվելու երևույթը նա բացատրում է հետևյալ կերպ: Հնդեվրոպական ձևերից վերջին հնչյունների անկումով հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերում հայերենում ստացվել

¹ Р. Ачарян, Имперфект в древнеармянском и некоторых индоевропейских языках. Доклады и сообщения. Т. IV, АН СССР, ян-т языкознания, 1953, Москва, стр. 86.

² Ch. Bartholome. Studien, II, էջ 18.

և քերեմ և քերէ. իսկ օժանդակ բայում՝ եմ և է. և մինչև բնավոր
բայերի եզակի 2-րդ դեմքին էական բայից և վերջավորութեան փո-
խանցումը ներկայի խոնարհումն ունեցել է հետևյալ պատկերը.

ե գ ա կ ի թ ի վ

բերեմ	եմ	աղամ
բերէ	ես	աղայ
բերէ	է	աղայ

հ ո գ ն ա կ ի թ ի վ

բերեմ	եմ	ալում
բերէ	ի	ալայ
բերեն	են	ալան

Այստեղ վերջավորութունների անկման հետևանքով համընկ-
նում են՝ եզակի 1-ին դեմքը հոգնակի 1-ին դեմքի հետ, եզակի
2-րդը՝ հոգնակի 2-րդի հետ, և միայն 3-րդ դեմքում է, որ եզակի
և հոգնակի թվերը ձևով տարբերվում են: Անհրաժեշտութուն է
զգացվում դեմքերի տարբերական, որի հետևանքով, բայերի հետ
միասին սկսում են գործածվել դերանոմներ, այսպես՝ դու բերէ, դուք
բերէ կամ ես բերեմ, մեք բերեմ և այլն: Ահա այս ճանապարհով
դուք և մեք դերանունների ք-ն իբր փոխանցվում է բայերին, որից
ստացվում է բերէք և բերեմք ձևերը, Դրանից հետո միայն եզակի
2-րդ դեմքը էական բայի ազդեցությամբ դառնում է բերես¹:

Ալեքսանդր Տոմսոնի տված այս քաջատրույթունը մեզ բավա-
կանաչափ հիմնավորված չի թվում: Դրա հիմնական պատճառն այն
է, որ Բ-ի առաջացման հարցը ընդհանուր հարց է, և հնչյունական
զարգացման այն օրենքները, որոնք գործել են բայերի մեջ (խոս-
քը վերջին հնչյունների անկման մասին է), գործել են նաև գոյա-
կանների մեջ: Եթե հնդեվրոպական *kétwores-ը հայերենում դառ-
նում է չոբ, սնս. duhitaras, հն. dugateres, հայերենում՝ դստեր,
սնս. çvanas, հն. kunes հայերենում՝ շուք և այլն, ապա ինչո՞ւ
չէր կարող սնս. bhāramas, գոր. feromes-ն էլ հայերենում բերեմք
դառնալ: Եթե Տոմսոնն ընդունում է ք-ի հնդեվրոպական ծագումը
գոյականներում, ապա ոչինչ չի խանգարում, որպեսզի բայերում
երևան եկող ք-ին էլ նույնպիսի ծագում վերագրվի:

Վեզվաբանների մյուս մասը ժխտում է ք հոգնակիստ վերջա-
վորութեան հնդեվրոպական ծագումը և գտնում է, որ այն հայերենի

¹ А. Томсон, Лингвистические исследования, СПб., 1887, стр. 108.

մեջ ներմուծվել է ոչ-հնդեվրոպական լեզուներից: Այսպես օրինակ, Հ. Շուխարդը հայերենի Բ-ին վերագրում է քարթվելական ծագում¹: Գլխին հայերենի Բ-ն համարում է լապպերենի և մաշառերենի² Կ-ից փոխառյալ հոգնակի ցույց տվող վերջավորություն³: Գ. Ղափանցյանը Բ-ն համարում է ասիանիկ լեզուներից փոխառյալ հոգնակերտ մի մասնիկ⁴ և այլն:

Ք վերջավորության հնդեվրոպական ծագումը ժխտող բոլոր լեզվաբաններն էլ հիմնվում են այն փաստի վրա, որ Բ-ի հնդեվրոպական ծագումը, այնուամենայնիվ, լիովին չի լուսաբանվում և այդ պատճառով ենթադրում են, որ այդ մասնիկը հայերենի մեջ թափանցած պետք է լինի ոչ-հնդեվրոպական լեզուներից:

Սակայն, լեզուների պատմության մեջ ընդհանրապես չեն դիտվում փաստեր, երբ կցական կամ թեքական լեզուներից հոգնակի թվի վերջավորություններ (ոչ հոգնակի թվով բառաձևեր) մի լեզվից մյուսի մեջ թափանցեին:

Իսկ ինչպիսի՞ փաստարկներ կան, որոնք խոսում են Բ վերջավորության հնդեվրոպական ծագման դեմ: Միակ և բավականաչափ ծանրակշիռ փաստարկն այն է, որ ըստ հնչյունական զարգացման հնդեվրոպական բառերի վերջին հնչյունները հայերենում պետք է ընկնեին: Ահա այս հանգամանքն է, որ դժվարացնում է հարցի լուծումը: Այդ պատճառով մեզ մնում է միայն անել որոշ ենթադրություններ S-ի պահպանման և ձևափոխության մասին:

Նախ և առաջ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերի վերջավորությունների անկմանը խոշոր չափով կարող էր արգելակել այն փաստը, որ այդ վերջավորությունների կորստով հոգնակի և եզակի ձևերը առաջին և երկրորդ դեմքերում կհամընկնեին, որի հետևանքով մեծ շփոթություն կառաջանար լեզվում, մանավանդ որ դերանունների գործածությունը բայերի հետ ընդունված չէր:

Հնարավոր է, որ հայերենի խոնարհման համակարգի կազմավորման շրջանում գործել է մի այլ հնչյունական օրենք (կամ մի քանիսը), որը խանգարել է մեզ հայտնի հնչյունական օրենքի բացարձակ տարածմանը: Ըստ երևույթին պատահական չէ այն

¹ H. Schuchardt, WZKM, XVI, 304.

² Ուգրո-ֆիննական լեզուներ են:

³ Gleye, Keleti szemle, II.

⁴ Г. Капанця, К происхождению армянского языка, Ереван, 1946.

փաստը, որ այդ խնդիրը բոլոր դեպքերում էլ կապվում է S հնչյունի հետ:

Այսպես. եզակի 2-րդ դեմքում S-ը, որ ըստ հնչյունական հայտնի օրենքի պետք է վերածվեր յ-ի՝ պահպանվում է, եզակի 3-րդ դեմքում (*es-ti > է), ընդհակառակն, st-ն, որ պետք է պահպանվեր՝ ընկնում է և, վերջապես, հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերում՝ S-ը նույնպես պահպանվում է և օրինաչափորեն, ինչպես գայականներում, այնպես էլ բայերում, վեր է ածվում Բ-ի: Այժմ, անշուշտ, դժվար է այդ հնչյունական օրենքի որոշակի սահմանումը տալ և նրա ազդեցության սահմաններն ու ժամանակը որոշել, բայց և այնպես նրա գոյությունը հնում անհնարին չէ: Այն, որ հնդեվրոպական S վերջավորությունը հայերենում չի ընկել, այլ ձևափոխվելով վեր է ածվել Բ-ի, ոչ թե պատահականությունների արդյունք է, այլ պայմանավորված է լեզվի զարգացման տվյալ էտապում գործող օրենքներով, որոնց նշանակությունը այժմ մթափնել է:

Հայերենի բայերի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի առաջացման հարցի կապակցությամբ պետք է հաշվի առնել մեկ մոմենտ ևս: Այդ այն է, որ բնդհանրապես, ինչպես վերևում նշեցինք, հնդեվրոպական լեզուների բայերի հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերը հանդես են գալիս խիստ ձևափոխված, այնպես որ հայերենի վիճակը այս հարցում բացառիկ չէ:

Իսկ ինչո՞վ են հիմնավորում Բ-ի ոչ-հնդեվրոպական ծագումը: Ըստ էության ոչնչով: Ոչ լեզուների պատմությունից բերված փաստերը և ոչ էլ լեզվական տվյալները այդ կարծիքի օգտին նպաստավոր ոչինչ չեն ասում:

Այսպիսով, թեև հնդեվրոպական S-ը Բ-ի վերածվելու խնդիրը հայտնի հնչյունական օրենքներով լիովին չի լուսաբանվում, այնուամենայնիվ, այդ տեսակետը մնում է միակ հավանականը:

Սակայն, բայական բոլոր ձևերում չէ, որ Բ-ն համապատասխանում է հնդեվրոպական S-ին: Այսպես օրինակ, հրամայականի բեր էֆ ձևի դիմաց հնդեվրոպական լեզուներում վկայված են՝ սնս. bhārata, հն. fērete, լատ. agite, հսլ. necete, որոնցում S-ը բացակայում է: Այստեղից կարելի է ենթադրել, որ մի շարք ձևերում վերջատառ S-ը Բ-ի ձևափոխվելուց և ապա առանձին որպես հոգնակերտ մասնիկ գիտակցվելուց հետո, այնուհետև փոխանցվում է հոգնակի ցույց տվող նաև այլ ձևերի վրա և ընդհանուր դառնում բայերի հոգնակի թվի առաջին և երկրորդ դեմքերի համար բոլոր ժամանակներում:

Հայերենի հոգնակի թվի 3-րդ դեմքի և վերջավորությունը հեշտությամբ բացատրվում է հնդեվրոպական նույն դեմքի *-nti (*-enti) վերջավորությամբ: Հայերենի և հնդեվրոպական չեզոքների այս վերջավորության համեմատությունը անմիջապես երևան է բերում նրանց կապը:

Համեմատենք եմ և բերեմ բայերի հոգնակի երրորդ դեմքերը հնդեվրոպական մի շարք լեզուներում. (հնդեր. *senti, *sonti). սնս. santi, զնդ. hanti, հն. eisi (<enti), գոր. enti, գոթ. sind, լտ. sunt, հսլ. сѹтъ, հյ. են, (հնդեր. bheronti), սնս. bharanti զնդ. baranti, հն. ferousi, գոր. fêronti, գոթ. bairand, հվդ. berant, լտ. ferunt, հյ. բերեն:

Հայերենում հնդեվրոպական *-nti վերջավորությունից պահպանվել է միայն ն-ն, փսկ վերջին վանկը (ն) օրինաչափորեն ընկել է: Նույն երևույթը դիտվում է նաև գերմաներենում, որտեղ gehen, haben ձևերի փոխարեն դեռևս XIV դարում գործածվում էին gehnent և habent:

Հոմարենի fêronti, լտ. ferunt, գթ. bairand ձևերին հայերենում համապատասխանում է բերեն: Այստեղ բնի հնդեվրոպական o ձայնավորը համաքանության շնորհիվ վեր է ածվել ե-ի:

Համառոտագրություններ

ալբ.— ալբաներեն	հվգ.— հին վերին գերմաներեն
ավ.— ավեստա	հնդեր.— հնդեվրոպական
ատտ.— ատտիկյան	հն.— հունարեն
գոթ.— գոթերեն	իռլ.— իռլանդերեն
գրբ.— գրաբար,	իսլ.— իսլանդերեն
դոր.— դորիական	լտ.— լատիներեն
զնդ.— զենդերեն	լիտ.— լիտվերեն,
հյ.— հայերեն	խեթ.— խեթերեն
հիոլ.— հին իռլանդերեն	սնս.— սանսկրիտ
հիսլ.— հին իսլանդերեն	վեգ.— վեդեյական
հսլ.— հին սլավոներեն	

Т. КАРАГЮЛЯН

ЭТИМОЛОГИЯ ЛИЧНЫХ ОКОНЧАНИЙ НАСТОЯЩЕГО ВРЕМЕНИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Р е з ю м е

Древнеармянский язык (грабар), хотя и подвергся сильному влиянию местных языков, все же полностью сохранил свой индоевропейский характер.

При рассмотрении личных окончаний настоящего времени в сравнении с их соответствующими формами в индоевропейских языках становится очевидным, что они подверглись небольшому изменению и, в основном, хорошо сохранились.

Этимология некоторых окончаний настоящего времени не вызывает никаких сомнений. Окончание 1-го лица единственного числа *ւ* (*m*) происходит от и.-е. — **mī* и имеет соответствующие формы во многих и.-е. языках.

Взаимным влиянием тематических и нетематических глаголов (бытийный глагол) объясняется также и окончание 2-го л. ед. ч. *ս* (*s*) от и.-е. — **sī* (*բԵՐԲՍ* — *beres* и *ԲՍ* — *es*) и окончание 3-го л. ед. ч. *յ* (*y*) от и.-е. — **tī* (*բԵՐԷ* < *բԵՐԲԷ* — *beres* < *beres* и *Է* < *ԷԷ* — *e* < *eu*).

Окончание 3-го л. мн. ч. *ն* (*n*) восходит к и.-е. соответствующему окончанию — **ntī* и имеет множество параллельных форм.

Много толкований вызвало окончание 1-го и 2-го л. мн. числа — *ր*.

Существуют различные точки зрения относительно происхождения этого окончания.

Большая часть языковедов находит, что это окончание индоевропейского происхождения. Такого мнения Бопп, Фр. Мюллер, Патканян, Тервишян, Бругман, Педерсен, Мейе, Ачарян и др. Окончание 1-го л. мн. ч. *ւք* (*mk'*) сравнивается с соответствующими окончаниями санскр. — *mas*, греческ. — *mes*, лат. — *mus*, а 2-е л. мн. ч. *յք* (*yk'*) с латинским окончанием — *tis*. *f* является видоизменением и.-е. конечного *s*.

Другая часть лингвистов (Шухардт, Глейе, Капанцян и др.) высказывает мнение о том, что *f* заимствован из языков не и.-е. происхождения.

Хотя и.-е. происхождение *f* известными фонетическими законами полностью не освещается, все-же есть основание предполагать, что такое решение вопроса является единственно возможным.